Օգոստոսի 9-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 15 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի հանրապետության Արագածոտնի մարզի Մելիք գյուղի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում» և «Լեռանային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական դպրոցների և նախադպրոցական հաստատությունների կահավորում» ծրագրերը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի քսան համայնքերի երեխաների համար քրիստոնեական ամառային ճամբարի կազմակերպում», «9 տարեկան երեխաների համար նախատեսված քրիստոնեական ուսուցման ձեռնարկի տպագրություն», «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արտենի համայնքի կիրակնօրյա դպրոցի վերանորոգում», «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Թալինի հիվանդանոցի («Թալինի բժշկական կենտրոն» ՓԲԸ) համար ջեռուցման համակարգի նախագծում և տեղադրում», «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Դաշտադեմ համայնքի միջնակարգ դպրոցի մասնակի վերանորգման», «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Անի թաղամասում մինիֆուտբոլի խաղահրապարկի կառուցում», «Մետաղական կոնստրուկցիա ներով խաղասարքերի մատակարարում, տեղադրում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի տարածաշրջանի (Ապարան, Արագած, Արայի, Կայք և Սարալանջ համայքներ)», «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի համայնքներին շինարարական նյութերի մատակարարում», «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի համայնքներին շինարարական նյութերի մատակարարում» և «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Թալինի տարածաշրջանի Դավիթաշեն համայնքին շինարարական նյութերի մատակարարում» ծրագրերը.

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Տաշիրի նոր մանկապարտեզի մասնաշենքի կառուցման» ծրագիրը.

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ճամբարային հանգստի կազմակերպում» ծրագիրը.

«Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության 2013 թվականի օգոստոս-դեկտեմբեր ամիսների գործունեության ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: